

---

## ԱՂԱՅԱՆԸ ԲԱՐԲԱՈՒԳԵՏ

### ԳԱՂԹՈՒՅԻ ՀԱՆԱՆՅԱՆ

Իր գիտական արգասավոր գործունեության ընթացքում է. Աղայանը հաճախ է անդրադարձել բարբառագիտության զանազան խնդիրների: Հայտնի է, որ նա հայագիտության ասպարեզ մուտք գործեց իբրև բարբառագետ: Առաջին աշխատանքը մայրենի՝ Մեղրու բարբառի քննությունն էր, որն 1941 թվականին պաշտպանվել է իբրև թեկնածուական ատենախոսություն և նույն թվականին լույս տեսել ԵՊՀ-ի գիտական աշխատությունների 19-րդ համարում: Ավելի քան մեկ տասնամյակ անց, 1954 թվականին՝ անհրաժեշտ փոփոխություններով, շտկումներով ու լրացումներով հրատարակվել է առանձին գրքով<sup>1</sup>: Քաջ իմանալով իր մայրենի բարբառի բոլոր նրբությունները՝ Աղայանն ստեղծել է իր տեսակի մեջ կատարյալ մի գործ, որն ըստ արժանվույն գնահատվել է ժամանակին<sup>2</sup>: Գրքում քննարկված են Մեղրու բարբառի լեզվական բոլոր մակարդակներն իրենց համակարգերով: Այստեղ մենք չենք անդրադառնա դրանց: Նշենք սակայն, որ խոսելով լեզվական որոշ երևույթների մասին, ի տարբերություն բարբառագիտական այլ ուսումնասիրությունների, Աղայանը, հենվելով բառապաշարի ծագումնաբանական շերտերի, սրանցում կատարված հնչյունական տեղաշարժերի վրա, ներկայացնում է նաև այդպիսի տեղաշարժերի մոտավոր ժամանակագրությունը: Այսպես օրինակ. խոսելով *ա>է* և *ու>օ* պատմական հնչյունափոխությունների մասին, ենթադրում է, որ *ա>է* անցումը պետք է կատարված լինի մոտավորապես 10-րդ դարի վերջերին և 11-րդ դարի կեսերին, քանի որ հնչյունական այս օրենքին ենթարկվում են նաև արաբական հին փոխառությունները, ինչպես՝ *բակլայ>բէկլէ*, *ալա-ժահրի>ալաժէհռէ*, իսկ ադրբեջաներենի միջոցով փոխառված *բազազ>բաճազ*, իսկ *բասար «խելք»>բա՛սար* բառերը չեն ենթարկվել այս փոփոխությանը: Այս նույն՝ արաբական փոխառությունները *ու>օ* փոփոխության չեն ենթարկվել. սա նշանակում է, թե արաբների տիրապետության ժամանակ հնչյունական այդ օրենքն արդեն դադարել է գործելուց: Դա մոտավորապես 8-րդ դարի կեսերին է ընկնում (օր. *սնդուկ>սունդուկ*, *պուրծ>բուրջ* և այլն): Իսկ ներդաշնակությամբ պայմանավորված *ը>ու* համապատասխանությունն էլ (*սընդուկ>սունդուկ*) ցույց է տալիս, որ ձուկն, մուկն, սունկն տիպի բառերում նախ կատարվել է *ը>ու*, ապա նոր միայն *ու>օ* անցումը (*ձուկն>\*ձուկուն>ձօկուն*, *մուկն>\*մուկուն>մօկուն*, *սունկն>\*սունգուն>սօնգուն*): Սա էլ իր հերթին վկայում է, որ ձայնավորների ներդաշնակության օրենքը ինքնուրույն զարգացման արդյունք է՝ 8-րդ

---

<sup>1</sup> Տե՛ս **Է. Բ. Աղայան**, Մեղրու բարբառը, Եր., 1954 (տե՛ս առաջին էջի հեղինակային «Երկու խոսք»-ը):

<sup>2</sup> Տե՛ս **Ս. Բաղդասարյան**, Եր. Աղայանի «Մեղրու բարբառը», «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր», 1955, № 1, էջ 97-103:

դարից էլ վաղ գործող, «... և կապ չունի թուրքերենի ազդեցության հետ, ինչպես կարծում են ոմանք...»<sup>3</sup>:

Ուսումնասիրության վերջում ներկայացված են բանահյուսական հարուստ նմուշներ՝ գիտական տառադարձությամբ, որն ավելի է բարձրացնում այդ նմուշների գիտական արժեքը:

Գրքի վերջում, իբրև առանձին բաժին, ներկայացված է «Չայերեն բարբառների դասակարգումը», ուր Ա. Ղարիբյանի հետ միաժամանակ և նրանից անկախ<sup>4</sup> Աղայանը կատարել է բարբառների ձևատիպաբանական դասակարգում՝ ըստ սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ բայաձևերի կազմության սկզբունքի: Առանձնացված են բարբառային երկու հիմնական ճյուղեր՝ դերբայակազմ և գրաբարակերպ-մասնիկավոր: Առաջին ճյուղի մեջ դասակարգված են այն բարբառները, որոնք սահմանական ներկան և անցյալ անկատարը կազմում են *-ում*, *-ել*, *-ս* վերջավորություններ ունեցող անկատար դերբայի և օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար ժամանակների հարադրությամբ: Այդպիսի կազմություն ունեն արևելյան տարածքների բարբառները: Երկրորդ ճյուղի բարբառները ևս ունեն երեք ենթաճյուղ: Սրանք հիշյալ բայաձևերը կազմում են **կը, կա, հա** եղանակիչ մասնիկների և գրաբարի սահմանական ներկայի և անկատար անցյալի հարադրությամբ: Մասնակի բացառություն է խոտըրջուրի բարբառը, որի սահմանական ներկան և անկատար անցյալը միայն բաղաձայնասկիզբ բազմավանկ բայերի դեպքում պահպանել են գրաբարյան ձևերը:

«Մեղրու բարբառը» մենագրությունից հետո Աղայանը այնուհետև տարբեր տարիների տարբեր առիթներով անդրադարձել է բարբառագիտության շատ հիմնախնդիրների: Այստեղ չենք անդրադառնա բարբառների՝ իբրև համաժողովրդական լեզվի տարածքային տարբերակների, նրանց ծագման, զարգացման, աստիճանական վերացման, բարբառային տարբերակվածության առաջացման ներքին մեխանիզմների մասին Աղայանի ըմբռնումներին և դասագրքային արժեք ստացած նրա սահմանումներին<sup>5</sup>: Առավելապես կարևորում ենք Աղայանի բարբառագիտական այն հրապարակումները, որոնք վերաբերում են համաժողովրդական լեզվի զարգացման գործում բարբառների դերի, հայերենի բարբառային հնագույն տարբերակվածության, արդի հայերենի բարբառների և գրաբարի փոխհարաբերության, դրանց ծագման ու զարգացման հիմնախնդիրներին:

Յուրահատուկ է Աղայանի կարծիքը ինչպես շատ հարցերում, այնպես էլ մեր լեզվի զարգացման արդի փուլում բարբառների ու բարբառայնության գնահատման հարցում: «Երեկոյան Երևան» օրաթերթի 1962 թ. ապրիլի 28-ի համարում լույս տեսած, կարելի է ասել բանավիճային, հողվածում Աղայանը այն միտքն է արտահայտել, որ բարբառայնությունը խոչընդոտում է մեր գրական լեզվի զարգացմանն ու համընդհանրացմանը, ուս-

<sup>3</sup> Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 57:

<sup>4</sup> Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 231-ի տողատակի ծանոթությունը:

<sup>5</sup> Տե՛ս Է. Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 92-94, 177-182, 277-288, 628-639:

տի պետք է պայքարել բարբառային անհարկի դրսևորումների դեմ: Այս հոդվածի դեմ գրողների միությունում կրքոտ ելույթ է ունեցել Լևոն Չախվերդյանը, որին ի պատասխան «Սովետական գրականություն» ամսագրի 1963 թվականի 6-րդ համարում Աղայանը հանդես է գալիս «Չայոց լեզվի մշակման ու հարստացման և բարբառների դերի մասին» հոդվածով: Հոդվածում այն միտքն է ընդգծվում, որ չպետք է շփոթել լեզվի կաղապարայնությունը լեզվի կանոնավորության ու նորմավորվածության հետ: Ստեղծագործական արակտիկայում թույլատրելի է յուրաքանչյուր ձև, եթե այն չի հակասում լեզվի տվյալ փուլի կառուցվածքին, նրա ոգուն, զարգացման միտումներին: Ցավոք սրտի, տարածքային և քաղաքական մասնատվածությունը հոգեբանական բարդությոներ է առաջացրել նաև մեր լեզվամտածողության, լեզվագործառության, լեզվատարբերակների գնահատման չափանիշների մեջ: Այստեղ Աղայանը հստակորեն նշում է ժողովրդական լեզու և բարբառ հասկացությունների գործառության սահմանները, դրանց դերը համազգային գրական լեզվի մշակման գործում: «Ժողովրդական լեզուն,- գրում է Աղայանը,- այն լեզուն է, ... որով հաղորդակցվում են իրար հետ ժողովրդի բոլոր հատվածները: Մեզ մոտ՝ Չայաստանում, բարբառների բազմազանությունը և նրանց միջև եղած տարբերությունները, իհարկե, զգալի կերպով թուլացրել են այդ ընդհանրությունը, բայց դա չի հանգեցրել ընդհանրության բացասմանը»<sup>6</sup>: Բարբառները լեզվի ստորին ձևերն են, նրա մի այլափոխությունը տվյալ վայրում: «Իբրև այդպիսին նրանք խանգարում են ազգային լեզվի տարածմանը, նրա միասնությանն ու միօրինակացմանը: Այս պատճառով էլ նրանք պահպանելը ոչ միայն օգուտ չի բերի, այլև կվնասի մեր ազգային լեզվին: Եվ հենց այս տեսակետից մոտենալով է, որ մենք մեր հոդվածում գրել ենք, թե բարբառների մահացմանը նպաստելը և բարբառայնության դեմ պայքարելը բոլորիս գործն է»<sup>7</sup>: Մեծանուն լեզվաբանի նման տեսակետը ազգային լեզվի զարգացման գործում բարբառների դերի մասին 1950-60-ական թվականներին թերևս մասամբ հասկանալի էր: Բայց նույն հոդվածում միաժամանակ ինքն էլ գտնում է, որ պետք է օգտվել բարբառներից, մանավանդ բարբառային բառապաշարից այն դեպքում, երբ դրա անհրաժեշտությունը զգացվում է: Հենց իր նայրենի բարբառի **տղհալ** անվանումն է ընդհանրացել հայերենում օտար *ղավուրմայի* փոխարեն, իր առաջարկով է ԳԱԱ հանձնաժողովը գյուղատնտեսական տերմինաբանության մեջ ընդունել Մեղրու բարբառի **գետնանուշ** անվանումը *արախիսի* փոխարեն, որը հետո մտել է նաև ռուս-հայերեն քառահատոր բառարանի մեջ: Հոդվածում թեև իրավամբ նշվում է, որ «Մեր ժամանակակից գրական լեզվի հարստացման հիմնական աղբյուրը հենց ինքն է՝ մեր այսօրվա գրական լեզուն՝ իր եզակիորեն անսպառ բառակազմական հնարավորություններով, ոճաբանական միջոցների բազմազանությամբ ու արտակարգ կերպով ճոխ դարձվածաբանությամբ», բայց մյուս կողմից անհասկանալի է նրա խիստ ժխտողական վերաբերմունքը գեղարվեստական գրականության մեջ բարբառների գնա-

<sup>6</sup> Է. Աղայան, Չայոց լեզվի մշակման ու հարստացման և բարբառների դերի մասին, «Սովետական գրականություն», 1963, № 6, էջ 113:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 115:

հատման հարցում՝ «... մեր արդի գեղարվեստական գրականության դռները պետք է փակել բարբառների ու բարբառայնության առջև»<sup>8</sup>: Հողվածը եզրափակվում է այսպես. «Հասկանալի է նաև, որ բանավեճին մասնակցողներիցս յուրաքանչյուրը այս կամ այն հարցում կարող է ծայրահեղության մեջ ընկնել կամ նույնիսկ սխալվել: Կարևորն այդ չէ, այլ այն, որ այսպիսի բանավեճերը մտքերի առողջ բախումով առաջ են քաշում և արծարծում խիստ արդիական խնդիրներ և լուծում, եթե ոչ բոլորը, գոնե նրանց մի մասը: Իսկ դա արդեն ողջունելի է»:

Հայ բարբառագիտության առանցքային խնդիրներից մեկն էլ եղել է և դեռևս մնում է արդի հայ բարբառների ծագման, առաջացման մոտավոր ժամանակաշրջանի և դրանց հարաբերական հաջորդականության բացահայտումը: Այս հարցին անդրադարձել են ինչպես հայրենական, այնպես էլ այլազգի այն բոլոր հայագետները, որոնք զբաղվել են հայերենի պատմության հիմնախնդիրներով: Տարակարծիք դիրքորոշումները հայտնի են, և դրանց չենք անդրադառնա: 1958-61 թվականներին «Պատմա-բանասիրական հանդեսի», ապա նաև «Вопросы языкознания» միութենական հանդեսի էջերում ծավալվում է այս հարցին նվիրված բանավեճ, որին մասնակցել է նաև Աղայանը՝ հանդես գալով «Նոր հայերեն բարբառների առաջացման մասին»<sup>9</sup> և «О генезисе армянского консонантизма»<sup>10</sup> հոդվածներով: Հողվածներն ուղղված էին հիմնականում Արարատ Ղարիբյանի տեսակետի դեմ, ըստ որի՝ հայերենի արդի բարբառների մի մասն առաջացել է հնագույն ժամանակներում՝ գրաբարից առաջ, երկրորդ մասը՝ հայ ժողովրդի կազմավորման շրջանում, երրորդ մասն ավելի ուշ՝ հետգրաբարյան շրջանում: Ղարիբյանն իր այս տեսակետը հիմնավորում էր հնդեվրոպական հիմնալեզվի համար վերականգնված պայթականների՝ հայերենում կրած հետագա տեղաշարժերով: Հայերենի բարբառային ամենավաղ գոյացությունները, ըստ Ա. Ղարիբյանի, այն բարբառներն են, որոնք ունեն շնչեղ ձայնեղներ: Հնչյունական այդ միավորները Ղարիբյանը դիտում էր իբրև հիմնալեզվի շնչեղ ձայնեղների շարունակությունը հայերենի բարբառներում: Դրանք Փոքր Հայքի, մերձեփրատյան հյուսիսային շրջանների, Բարձր Հայքի և Հայաստանի կենտրոնական տարածքների (*խարբերդերզնկա, Արաբկիր, Ակն, Շապին-Գարահիսար, Կարին, Մուշ, Այրարատ, Ոզն, Ջուղա*) բարբառներն էին: Ղարիբյանն իր տեսակետը հիմնավորում է նաև գրաբարում փոքր հաճախականությամբ հանդես եկող ձևաբանական որոշ իրողությունների առկայությամբ (-ծ-ով հարակատար, հարակատարի կրավորական կառուցվածք, հավաքական *-եար, -նեար, -նի* մասնիկների՝ իբրև առանձնական հոգնակերտների կիրառության և այլն):

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1958 թվականի № 2-ում տպագրված «Նոր հայերեն բարբառների առաջացման մասին» հոդվածում Աղայանը, հիմք ընդունելով մի կողմից հնդեվրոպական ծագման, մյուս կողմից փոխառյալ (հատկապես իրանական, ապա նաև ասորական ու թուրքական) բառերի հնչյունական համապատասխանությունները գրաբարի և

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 116:

<sup>9</sup> Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2:

<sup>10</sup> Տե՛ս «Вопросы языкознания», 1960, № 4:

ճախալեզվի հնչյունական համակարգերում և համեմատելով դրանք բարբառային համապատասխան ձևերի հետ, հերքում է Ղարիբյանի այդ տեսակետը և գտնում, որ շնչեղ ձայնեղների առկայությունն այդ բարբառներում ուշ ժամանակներում՝ գրաբարից հետո առաջացած իրողություն է: Այս եզրակացությանը նա հանգում է հարուստ փաստարկումներով: Եթե հայ բարբառների շնչեղ ձայնեղները հնդեվրոպական համապատասխան հնչյունների դրսևորումները լինեին, ապա պիտի հանդես չգային այն բառերում, որոնցում փոխատու լեզուն ուներ պարզ ձայնեղներ (պիլ. բազուկ, Կարին՝ **բ'ազուկ**, Երևան, Ալաշկերտ, Սեբաստիա՝ **բ'ազուկ**, Նոր Զուղա՝ **բ'ազուք**. այսպես և պիլ. **բամբակ**, **բարակ**, **բարձ**, **գոմէշ**, **ջուխտ** և այլ բառերում): Իսկ եթե հետգրաբարյան փոխառությունների մեջ էլ առկա է ձայնեղների շնչեղացում, ուրեմն համապատասխան բարբառներն էլ առաջացել են գրաբարից հետո: Շնչեղացումն այդ բարբառներում ընդգրկում է նաև բնիկ այն բառերի ոլորտը, որոնցում հիշյալ բաղաձայնները ստուգաբանական այլ հիմքեր ունեն: Այսպես օրինակ. հայտնի է, որ գրաբարի գ-ն առաջացել է ոչ միայն հնի. *gʰ*-ից, այլև՝ *v*-ից: Հիշյալ բարբառներում երկու դեպքում էլ գրաբարի պարզ ձայնեղի դիմաց առկա է շնչեղ ձայնեղ, ինչպես ասենք *\*vedo>qետ>* բարբառներ՝ **գ'ետ**, *\*vorg>qործ>* բարբառներ՝ **գ'ործ**, *\*voren>qանն>* բարբառներ՝ **գ'ան** և այլն:

Իսկ հարակատարի *-ած* ածանցն ու *ու>վ*-ով կրավորական կառուցվածքը ըստ Ղարիբյանի եղել են մեր բարբառների մեջ հնագույն ժամանակներից և հետո՝ գրաբարն ընդհանուր լեզվի վերածվելու գործընթացում զրկվել են կենսունակությունից և գտնվել իներտ վիճակում, հետագայում նույն բարբառների ազդեցությամբ իներտ վիճակից վերածվել են գործուն վիճակի: Հակադրվելով Ղարիբյանի նաև այս փաստարկմանը՝ Աղայանը այստեղ պատմական զարգացման ողջ ընթացքը շրջված է համարում: «Որ բայից կազմվող ածականները կարող են դառնալ դերբայ, անսովոր երևույթ չէ լեզվի մեջ: Հենց մեր բարբառները դրա համար շատ տվյալներ են մատակարարում. օրինակ՝ *-ուկ* ածանցով ածականներ ունենք գրաբարում (*յեղյեղուկ*, *այլայլուկ* և այլն), որոնք արտահայտում են մեր *-ած*, *-ող* ածանցներով կազմված դերբայների իմաստը. այդ նույն մասնիկով այժմ մեր որոշ բարբառներում կազմվում են հարակատար դերբայը և հարակատարի ժամանակները (*կայնուկ ա*, *նստուկ ա* և այլն): Գրաբարյան *-ական* ածանցը, որ այնքան մեծ կիրառություն ունի և՛ գրաբարում, և՛ ժամանակակից հայերենում, և՛ բարբառներում՝ իբրև ածականակերտ մասնիկ, Ղարաբաղի և Մեղրու բարբառներում կազմում է ապառնի դերբայ (*նրստըլական ըմ* «նստելու են» և այլն)»<sup>11</sup>: Ի վերջո, Աղայանն այն տեսակետն է ընդունում, որ նոր «... հայերեն բարբառներից և ոչ մեկն էլ գրաբարից հին չէ: Բոլոր հայերեն բարբառները ներկայացնում են գրաբարյան համակարգի հետագա զարգացումը՝ տարբեր ուղղություններով ու ձևափոխություններով»<sup>12</sup>: Այնուհետև հետևելով Հր. Աճառյանին, այն միտքն է ընդգծում, որ բարբառային առանձին երևույթներ գրաբարից չեն

<sup>11</sup> Է. Աղայան, Նոր հայերեն բարբառների առաջացման մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 224:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 225:

բխում և ավելի հին են նրանից: Սակայն այդ բոլորը չեն ներկայացնում այնպիսի սուր տարբերություններ, ինչպես այժմյան բարբառները: Խոսելով հայերենի բարբառների գոյության և սրանց ծագման հիմքերի մասին՝ Աղայանը նշում է, որ «Չի կարելի խոսել առհասարակ հայերեն բարբառների մասին. անհրաժեշտ է տարբերել հին հայերեն բարբառներ և նոր հայերեն բարբառներ հասկացությունները և դրան համապատասխան էլ կատարել լեզվաբանական, բարբառագիտական հետազոտություններ»<sup>13</sup>: Աղայանն ընդունում է նախահայերենի ճյուղավորումները հանդիսացող հին բարբառներ (սրանց գոյության մոտավոր ժամանակաշրջանը մ. թ. ա. 15-14-րդ դարերից մինչև մ.թ. 4-5-րդ դարերը) և նոր հայերենի բարբառներ, որոնց սահմանավորումը տեղի էր ունենում հին բարբառների մահացմանը զուգընթաց: Մ. թ. 2-ից 4-5-րդ դարերը սահմանագիծն են հին հայերեն բարբառների մահացման և նոր հայերեն բարբառների սահմանավորման:

Չայ բարբառագիտության համար շատ արժեքավոր են Աղայանի հատկապես այն ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են հայերենի բարբառային հնագույն տարբերակվածության հարցերին: Այս տեսակետից պետք է առանձնացնել հատկապես «Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում»<sup>14</sup> և «Հին հայերեն *-իւն (-եան, -ուն) -ուան* հոլովումը»<sup>15</sup> հոդվածները: Առաջինում է. Աղայանը քննում է. ա) հայերենի *ր* և *ղ* բաղաձայններով սկսվող այն բառերը, որոնց նախահար *ե* և *ա* ձայնավորի հավելումով դրսևորվում են բարբառային զուգաձևություններ, բ) *քոյր* բառի հոլովական տարահիմք ձևերի ծագումը, գ) *-ութիւն* ածանցի բարբառային *-ութիւն, -ութէն, -ութին* ձևերը, դ) վերջնավանկի *եւ-իւ* կապակցությամբ զուգաձև բառերը:

- ա) Նախահար *ա* և *ե* ունեցող բառերն են՝  
*աղաւնի-եղունիկ / եղվնիկ,*  
*եղբայր-աղբայր / աղբար / աղբեր,*  
*եղիծ-աղիծ / աղինջ / եղինջ (նաև լեղիծ, խաղինջ),*  
*եղջիւր-աղջիր / աղջեր,*  
*երագ-արագ,*  
*երախայ-երեխա / արախա,*  
*երաշտ-արաշտ,*  
*երակ-արակ,*  
*երեկոյ-յարակու / հարակու,*  
*երեսուն-արասուն / յարասուն,*  
*երևալ-արևալ,*  
*երինջ-արինջ,*  
*երկաթ-արկաթ,*  
*երկան-արկան / արկանք,*  
*երկու-արկու / օրկու:*

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>14</sup> Տե՛ս է. Աղայան, Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր», 1958, № 2, էջ 211-233:

<sup>15</sup> Տե՛ս է. Աղայան, Հին հայերենի *-իւն (-եան-ուն)-ուան* հոլովումը, «Հանդես ամսօրեայ», 1987, դ տարի, էջ 623-627:

Քննելով այս բառերի տարածական բաշխումները՝ Աղայանը հանգում է այն եզրակացության, որ «... հին հայերեն բարբառների մի խմբում **ր**-ով սկսվող բառերի սկզբում ավելացել է այն ձայնավորը, ինչ որ եղել է բառի մեջ (երաշտ>արաշտ): Բարբառների մյուս խմբում անխտիր ավելացել է **ե**»<sup>16</sup>: Ազուլիսի, Մեդրու, Կարճևանի, Ղարաբաղի բարբառներում **ղ**-ից առաջ անխտիր ավելացել է **ա**, մյուս բարբառներում խառը վիճակ է, այսինքն՝ «... մի բարբառում՝ այս, մյուսում՝ այն ձևն ունեն, ինչպես՝ Երևան՝ **աղիմջ**, բայց՝ Յանձեն, Մուշ, Վան՝ **եղիմջ, յեղիմջ**: Սրանից պետք է եզրակացնել, որ, իրոք, մեր հիմնական բարբառները բաժանվում են երկու խմբի. նրանցից մեկին բնորոշ է **ա**-ով, մյուսին՝ **ե**-ով ձևը: Բայց այսօր մեր բարբառների մեծագույն մասի մեջ կա շփոթ վիճակ մի քանի բառերում, որ բացատրվում է *հին բարբառների փոխազդեցությամբ ու գրաբարի (հին հայերենի) ազդեցությամբ* (ընդգծումը իմն է - Գ. Յ): Սա միանգամայն բնական է, որովհետև այդ տարբերությունները, որպես օրինաչափ երևույթ, գոյություն են ունեցել հին հայերենի կազմավորմանը նախորդած շրջանում»<sup>17</sup>: Երուանդ անձնանվան Արուանդ, Օրոնտ, Երվանդ և սրա ածանցված *րուանդական* ձևերի առկայությունը կարծես հիմնավորում է վերը սահմանված օրինաչափությունը (**ր**-ից առաջ ավելանում է այն ձայնավորը, որն առկա է **ր**-ին հաջորդող վանկում, իսկ երկուսից ավելի վանկերով բառերում նախահար ձայնավոր չի ավելանում): Երուանդ ձևում էլ «... **ա**-ն փոխարինվել է **ե**-ով այն բարբառներում, որոնց մեջ ընդհանուր կանոն էր **ր**-ից առաջ անխտիր ավելացնել **ե** ձայնավորը»<sup>18</sup>: «Քանի որ հիշյալ *Արուանդ, Օրոնտ, Երուանդ, րուանդական* ձևերը հանդիպում են մ. ք. ա. IV-մ. ք. II դարերի հուշարձաններում, ապա ինքնին հասկանալի է, որ սահմանված կանոնները գործելիս են եղել այդ դարերում»<sup>19</sup>: Յենվելով այս օրինաչափության և *ե, ի, ու, եա, եայ, ոյ, իւ* ձայնավորների ու երկբարբառների սղման ու ամփոփման՝ Յուրբշմանի սահմանած ժամանակագրության վրա՝ Աղայանը հին հայերենի բարբառների մահացման ժամանակաշրջանը համարում է մ. ք. ա. I - մ. ք. II դարերը:

**Քոյր** բառը գրաբարում, միջին հայերենում և բարբառներում հանդես է գալիս *քոյր/քեռ/քոր/քուեր>քրվեր, \*քուոր>քրվոր/քուր-քրր* հոլովակազմ հիմքերով: Աղայանը մասամբ ընդունելով **քոյր** բառի հոլովակազմ հիմքերի այս տարածությունների՝ Յր. Աճառյանի բացատրությունը, գտնում է, որ *քեռ, քուեր, քուոր* ձևերը ծագում են հնդեվրոպական սեռական *swesros* ձևից՝ ձայնդարձի զանազան աստիճաններով. *քուոր>քրվոր*-ը՝ \**swosoros*-ից, *քուեր>քրվեր*-ը՝ \**swoseros*-ից, *քեռ*-ը՝ *swesros*-ից: Ձայնդարձի այս տարբեր աստիճաններով ավանդված ձևերը հին հայերենի բարբառային տարբեր ձևերի շարունակությունն են: Այստեղ չի ստուգաբանված գրաբարյան հոգնակի *քոր-ք* հիմքի ծագումը: Մեկ այլ հոդվածում՝ Գ. Ջահուկյանի «Յին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (Եր., 1959) աշխատությանը նվիրված գրախոսականում, կարևորելու համար բարբառային փաստերի նշանակությունը հատկապես լեզվաբանական պատմահամե-

<sup>16</sup> Է. Աղայան, Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003, էջ 75:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 76:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 77:

մատական ուսումնասիրություններում, Աղայանը նշում է, որ բարբառային տվյալների ներգրավումը կօգնե շատ հարցերի ավելի հստակ ու վճռական լուծմանը:

Կասկածի տակ առնելով *քոյր* բառի գրաբարյան հոգնակի ուղղականի և հայցականի *քոր-* հիմքի ծագումը ըստ Ջահուկյանի՝ հոգնակի ուղղական *\*swesores* հիմնաձևից՝ *քեհորք* ձևի միջնորդությամբ, Աղայանը գտնում է, որ Ջահուկյանը հաշվի չի առել բարբառային հնագույն տարբերակվածության հնարավորությունը: Ըստ հայերենի հնչյունական համապատասխան օրինաչափության՝ հնիս. *\*eso* հնչյունախումբը հայերենում *եհո-* անցումով վերածվում է *ոյ-*ի, ինչպես նույն բառի եզակի ուղղականում՝ *\*swesor>քեհոր>քոյր*: Ըստ այս օրինաչափության էլ Ջահուկյանի առաջարկած *\*swesores* նախաձևից հայերենում կառաջանար *քեհորք>քոյրք* ձևը, բայց «... քանի որ ունենք *քոր-ք*, *քոր-ս*, ապա պետք է ենթադրել մի ուրիշ նախաձև, հավանաբար՝ *\*swosores*»<sup>20</sup>:

«Հին հայերենի *-իւն* (*-եան*, *-ուն*) *-ուան* հոլովումը»<sup>21</sup> հոդվածում Աղայանը այն կարծիքն է արտահայտում, որ գրաբարի *իւն/եան* հոլովումը ծագում է հնիս. *\*-ven/-un/-η* ածանցի միջին և ստորին ձայնդարձներից. *\*-un-*ը, ստանալով ինքնուրույն ածանցի արժեք, հանդես է գալիս ուղղականում, իսկ *\*η-*ը՝ իբրև թեք հոլովների հիմքային բաղադրիչ: *-իւն* կապակցության մեջ բուն ածանցը *\*un>ւն-*ն է, ինչ նախալեզվյան բնային ձայնավորն է (*արի-ւն>արի-ուն/արի-ան>արեան*), այս նույն սկզբունքով էլ *եղեանն*, *մրջիմն*, *ուսումն*, *շարժումն* և նման ձևերում առկա է *-մն* ածանց՝ *ա*, *ի*, *ու* բնային ձայնավորներով: Հայերենի բարբառներում առկա *անուն/անում*, *մրջիւն/մրջում/մրջիմ*, *մայման/մահման* (<*մահուան/մահուման*) ձևերի առկայությունը բարբառներում և *պաշտան/պաշտամն* (գրբբ. *պաշտաման* ձևից ենթադրվող), *\*մահուան*՝ *\*մահում* (գրբբ. *մահուան*-ից ենթադրվող), *\*երդուան-ից*՝ *երդուանուլ>երդուանուլ>երդմուլ*, *երդումն-ից*՝ *երդմնեցուցանել* բառերի զուգաձև կազմությունները գրաբարում ենթադրել են տալիս համանիշ *\*men/ven* ածանցների գոյությունը հնագույն շրջանում, որոնց ձայնդարձի տարբեր աստիճաններով՝ *\*ven/un/η* և *\*men/mη* կազմվել են պրոցես, ընթացք արտահայտող բայանուններ: Սրա լավագույն հիմնավորումն է մահ - սեռ. *մահու*, *\*մահուան*/*\*մահումն* - սեռ. *\*մահուան>մահուան/մայման*, *մահման* (*մահուան* ձևից՝ Մեղրու բարբառի *մրիմորէ<մահվանօրեա* բարդությունը): Ինչպես *պաշտան/պաշտամն*, *\*մահուան/մահումն*, *մրջիւն/մրջիմն* ձևերում, այնպես էլ *\*անուն>անում/անումն* զուգաձևությունների համար «... պետք է կանխադրել ոչ թե *\*o/anomη* ձև և ենթադրել, ինչպես Մեյեն է կարծում, հնչյունափոխություն և անկում (*anomη>անուն>անում*, սեռ. հ. անուան), այլ *men* ածանցի փոխարեն *-un/-η* ածանցով կազմություն՝ հ.ե. *\*θ<sub>1</sub>*, *en/θ<sub>1</sub>*, *η* արմատից»<sup>22</sup>:

«Այս մեկնությունը մի կողմից վերացնում է *m/v* անիրական հնչյունափոխության կանխադրելու անհրաժեշտությունը, մյուս կողմից երևան բերում *nomη* նախաձևին զուգահեռ *\*no-ven>noη* -տ տարբերակը, որով հա-

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 120:

<sup>21</sup> «Հանդես ամսօրեայ», 1987, դ տարի, էջ 623-627:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 626-627:



յերենի անուն բառը անուն (<անունն>ոտո) տարբերակի առկայության պայմաններում, ստանում է հ.ե. բացառիկ հնաբանության արժեք»<sup>23</sup>:

Է. Աղայանի կողմից ուսումնասիրված բարբառային նշված, ինչպես և այլ զուգաձևությունների մոտավոր տեղայնացումը, ինչպես և լեզվական այլ իրողությունների բարբառային տարամետ իրացումների քննությունն ու տարածական բաշխվածության որոշումը թերևս ուրվագծեն հայերենի բարբառային վաղնջական որոշ միավորների ընդգրկման մոտավոր սահմանները:

**Բանալի բառեր** – *բարբառագիտություն, հնագույն բարբառներ, նոր հայերենի բարբառներ, պատմա-համեմատական հետազոտություններ, ժամանակագրություն, բաղաձայնական համակարգ, շնչեղ ձայնեղներ, հնդեվրոպական հնաբանություններ*

**ГАХТУИ АНАНЯН – Э. Агаян как диалектолог.** – В богатом научном наследии Э. Агаяна особое место занимают его диалектологические труды. Первой большой научной работой в этой области была его кандидатская диссертация «Мегринский диалект» – одно из лучших монографических исследований такого рода. Большую ценность представляют также работы о роли диалектов в развитии общенародного языка, о взаимоотношениях грабара и современных армянских диалектов, об их происхождении и развитии. При сравнительно-исторических исследованиях языков Э. Агаян уделял большое внимание привлечению диалектологических данных, выделению индоевропейских архаизмов в армянских диалектах. Диалектологические исследования Э. Агаяна могут послужить прояснению ряда спорных вопросов арменистики.

**Ключевые слова:** *диалектология, древнейшие диалекты, сравнительно-исторические исследования, хронология, консонантизм, звонкие аспирированные, индоевропейские архаизмы*

**GAGHTUHI HANANYAN – Aghayan as a Dialectologist.** – Dialectological research is an essential part of E. Aghayan's scientific legacy. His monograph entitled "The Dialect of Meghri" is one of the most valuable studies of this kind. E. Aghayan's works on the role of dialects in the development of the national language, the differentiation of Old Armenian dialects, the interrelation between Classical Armenian (Grabar) and Modern Armenian dialects, their origin and the problems of their development are really invaluable. E. Aghayan gave a high priority to the inclusion of dialectal material in historical-comparative studies, highlighting the importance of Indo-European archaisms in Armenian dialects. Relying on the sound changes that occur in different layers of genetic lexicon, E. Aghayan defined the relative chronology of their modifications. E. Aghayan's dialectological research provides rich data for further studies in Armenology.

**Key words** – *dialectology, ancient dialects, modern Armenian dialects, historical-comparative studies, chronology, consonantal system, aspire voiced consonants, Indo-European archaisms*

---

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 627: